



Օ Ր Ա Գ Ի Ր

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԵՒ

ԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ, ԹԻԻ 4.

1846

ՓԵՏՐՈՒԱՐԻ 15.

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՊԼԱՒԻ ԿՐԴՅ ԴԿԱՆՈՐ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԸՆԵՂՈՒ ԽՆԱԴՐ :

ՏՂՈՒ մը մտաւոր կարողութիւնները այնչափ տկար են որ հազիւ կը ճանչցուն, ան ալ շատ մեղմ կերպով լռի բերան ուշադրութիւն ամենին չցուցնեն. աւելի վրան երեւած կարողութիւնը երեւակայութիւն ու յիշողութիւնն է, որով տեսածը միտքը կը պահէ, ան ալ թէ որ շատ հաւաներ է ան բանին կամ վախճեր է անկէ. իրեն բոլոր կարողութիւնները զգայարաններուն վրայ են, այսինքն աչքին ձեռքին ու ականջին վրայ. աչքը տղուն հայլին է, ուստի իրեն մեծ զուարճութիւնն ալ է նոր նոր ու գոյնզգոյն բաներ տեսնելը. ձեռքով ալ խաղալ շատ կը սիրէ. իսկ ականջին ոյժը ասով ալ կ'իմացուի որ լեզու ելլելը անով կ'ըլլայ :

Իայց տղու մը վրայ երեւած մտաւոր կարողութիւններուն մէջ ամենէն սքանչելին իր բնական հետեւողութիւնն է. ասով է որ կարծես թէ առանց իմանալու՝ ամէն բանի մէջ

իր մօրը կը հետեւի. առջի զրուցած խօսքերը մօրը բերնէն լսածներն են, ու ինչուան շարժմունքներն ալ մօրը շարժմունքներուն նման կ'ըլլան : Իսոր մէկ յայտնի ապացոյցն ալ աս է որ մէկ տարեկան՝ երկու տարեկան տղաք երբոր աղախիններու ձեռքը մնան միշտ, անոնց բնաւորութիւններուն ու պակասութիւններուն ալ կը հետեւին :

Եւ մէկ տարեկան տղուն խելքը այնչափ բաց կ'ըլլայ որ մէկէն կ'իմանաս թէ բոլոր ան տարուան միջոցին մէջ շատ բան սորվեր է : Դեռ վեց ամսական եղած չեղած՝ կը նայիս որ կը ճանչնայ իր մայրը, քիչ ատենէն նաեւ հայրը, քոյրը, եղբայրը. կուլայ, կաթ կուտան. մէկէն կը ժպտի ու տոտիկները կը շարժէ. ըսել է թէ ուղածը եղաւ. կուլայ, տնէն դուրս կը հանեն. մէկէն ձայնը կը կտրէ՝ կը սկսի ծիծաղիլ. ըսել կ'ուզէ թէ իմուզածս ալ աս էր :

Ինչուան որ տղան երկու տարեկան չըլլայ՝ բնաւորութիւնը շատ դժուար կը հասկըցուի . կարծես թէ ինչպէս որ կերպարանքին գծագրութիւնը ամսէ ամիս ու շաբաթէ շաբաթ կը փոխուի, բնաւորութիւնն ալ նոյնպէս կը փոփոխի: Եւ տեսնես որ իրեք ամսական տղու մը համար կը զրուցեն թէ հօրը ելած է, վեց ամիսէն մօրը կը հանեն, մէկ տարիէն բոլորովին պապուն կը նմանցընեն: Եւ նմանութիւնները հարկաւ հիմ մը ունին, բայց երեւակայութիւն է զիրենք սաստկացընողը. ասանկ է նաեւ հոգւոյն գծագրութիւնը, որ է բնաւորութիւնը. որովհետեւ պզտիկ տղան լեզու չունի, դուն շատ անգամ պատահական դիպուածը իրական բնաւորութիւն կը կարծես. նեղութիւն մը ունի, դուն կարծես թէ լալկան կամ բարկասիրտ է. վատաւողջ ու տկար է, դուն կարծես թէ հանդարտ ու խելացի է: Եւ ուրիշ դժուար է տղուն բնաւորութիւնը ճանչնալը: Արեւմտիւնէ կերպով վարուելու է տղուն հետ ան միջոցին: — Եւ մէկ բան է առաջ համբերութիւնը ձեռք առնելու է. անկէ ետքը մէկ կողմանէ վարպետութիւն բանեցընելու է, մէկալ կողմանէ անուշութիւն:

Վարպետութիւնը հոն պիտի ելանայ որ տղուն ամենեւին երես չտորուի, ու պզտիկ է ըսելով՝ անպատշաճ բաներու մէջ կամքը չկատարուի. հապա աղէկութեւ համար սիրուի, պակասութիւնը վար զարնուի: Բայց մէկ կողմանէ ալ անուշութիւն պէտք է ցուցընել, այնչափ որ երբեմն քիչ մը պինդ ձայնով ալ խօսիլ ու յանդիմանել պէտք ըլլայ նէ, բարկութեան ու կատաղութեան նշան չտրուի տղուն. ան համբերութիւն խրատ տուողին փնաս կ'ընէ, ու խրատը լսողին օգուտ չընէր, թէպէտ և պզտիկ տղայ ըլլայ: Եւ ասանկ ըլլալով, ինչ ըսելու է ան մայրերուն որ տղոց պակասութեանը վրայ շուտ մը կը բար-

կանան, կրակ կը դառնան, ու անգթութեամբ կը զարնեն կը ծեծեն խեղճ տղաքը, աւելի իրենց գազանային սիրտը պաղեցընելու՝ քան թէ զանոնք կը թելու համար: Եւ խօսքը այսպիսեաց համար չէ. վասն զի ասոնք իրենց տղաքը մեծցընել միայն կը նային, որ անբան կենդանիք ալ կ'ընեն. մենք անոնց համար կը խօսինք ու կը գրենք սիրով աս ու ասոր նման բաները, որոնք որ իրենց տղաքը կը թել ու աղէկ մարդ ընել կը փափաքին:

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

() Քիւնիոյ թէ հրդեհէն փաստողներուն եղած օգնութիւններ:

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ առաքինութիւնը աս սքանչելի յատկութիւնս ունի որ սովորաբար բարիք մը ընդունողէն աւելի՝ նոյն բարիքն ընողին ուրախութիւն կը բերէ. բայց որովհետեւ ինչ և իցէ առաքինութիւն կամ բարի բան ըստ ինքեան սիրելի է ամենուն, անոր համար ոչ միայն բարերարն ու բարերարեալը կ'ուրախանան, հապա նաեւ տեսնողներն ու լսողները: Եւ ուրախութիւնս ունեցանք մենք ալ հետզհետէ քանի որ լսեցինք թէ այլեայլ կողմերէ որոնք ու որչափ դրամական օգնութիւն ըրեր են Օմիւռնիոյ աղետալի հրդեհէն փնասուած աղքատներուն:

Սօտերս տեղեկացանք որ նաեւ Ենգղիս գտնուած հայ և յոյն վաճառականները 7300 լիբէ սթերլին հաւաքեր են իրարմէ ու տեղացի բարերարներէ՝ նոյն հրդեհէն փնասուողներուն համար: Եւ գովելի ու նախանձելի մարդասիրութեան առաջին շարժիչ ու յորդորող եղեր են՝ մէյմը ազգասէր պարոն Յակոբ Աւճիկեանը, որ Լոնտրա () սմանցւոց դեսպանին առաջին թարգմանն ու քարտուղարն